

ԵՊՀ ԻԶԵՎԱՆԻ ՄԱՍՆԱԸՅՈՒՂԻ ՏՆՕՐԵՆ

Հ Ր Ա Մ Ա Ն № 2 Ն

«10» հունվարի 2017թ.

ք. Իջևան

§ 1

**Բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման
2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի
ուսումնական գործընթացների կազմակերպման
ժամանակացույցները հաստատելու մասին**

Հաստատել մասնաճյուղի բակալավրի կրթական ծրագրով առկա և հեռակա ուսուցման 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացների կազմակերպման ժամանակացույցը:

Բոլոր ստորաբաժանումներին՝ խստորեն հետևել ժամանակացույցում նշված աշխատանքների կատարմանն առանց լրացուցիչ գրավոր կամ բանավոր հիշեցումների: Ժամանակացույցում նշված ժամկետները չպահպանելը դիտել որպես կատարողական կարգապահության խախտում և դարձնել հատուկ քննարկման առարկա տնօրենության նիստերում:

Սույն հրամանի կատարման հսկողությունը դնել Ուսումնամեթոդական վարչության պետ Ա. Դավթյանի վրա:

ՏՆՕՐԵՆ՝

Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

I. Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ժամանակացույց

- Բակալավրի կրթական ծրագրով առկա ուսուցման 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն սկսել փետրվարի 6-ից:
- 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն ավարտել՝ ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մայիսի 27-ին, ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 1-ին:
- Առկա ուսուցման մինչև 5-րդ կիսամյակը 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումներն անցկացնել ս/թ փետրվարի 15-28-ը և ս/թ ապրիլի 25-ից մինչև մայիսի 1-ը ժամանակահատվածում:
- Առաջին ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել՝ ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մարտի 20-ից մինչև ապրիլի 1-ը, ավարտական կուրսերում՝ ս/թ փետրվարի 27-ից մինչև մարտի 11-ը:
- Առկա ուսուցման 5-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումներն անցկացնել ս/թ ապրիլի 25-ից մինչև մայիսի 01-ը ժամանակահատվածում և 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանում:
- Երկրորդ ընթացիկ քննությունները ոչ ավարտական կուրսերում անցկացնել ս/թ մայիսի 15-27-ը, իսկ ընթացիկ ստուգումները՝ ս/թ մայիսի 22-ից մինչև հունիսի 3-ը:
- Երկրորդ ընթացիկ քննություններն ու ստուգումները ավարտական կուրսերում անցկացնել ս/թ մարտի 27-ից մինչև ապրիլի 8-ը:
- 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի կուրսային աշխատանքների և ստուգարքների ընդունումը կազմակերպել՝ ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ մայիսի 22-ից մինչև հունիսի 3-ը, իսկ ավարտական կուրսերում՝ ս/թ մարտի 27-ից մինչև ապրիլի 8-ը:
- 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել՝ ոչ ավարտական կուրսերում՝ ս/թ հունիսի 5-ից մինչև սեպտեմբերի 23-ը, իսկ ավարտական կուրսերում՝ ս/թ ապրիլի 3-29-ը:
- Ամփոփիչ ատեստավորումն ավարտել մինչև ս/թ մայիսի 31-ը:
- Յուրաքանչյուր շաբաթվա վերջում ներկայացնել ուսանողների հաճախումների ամփոփ տվյալները:
- Պրոֆեսորադասախոսական կազմի ամառային արձակուրդի ժամկետը նախատեսել ս/թ հուլիսի 10-ից մինչև օգոստոսի 19-ը:

Ֆակուլտետների կողմից Ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

ՀՈՒՆՎԱՐ

Ս/թ հունվարի 23-ից մինչև հունվարի 31-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի

վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

ՓԵՏՐՎԱՐ

- Մ/թ փետրվարի 1-ից մինչև փետրվարի 7-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ փետրվարի 3-ը ներկայացնել 2017թ. բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:
- Մինչև ս/թ փետրվարի 20-ը ներկայացնել ամբիոնների կողմից իրականացվող դասալսումների գրաֆիկը:
- Մինչև ս/թ փետրվարի 20-ը ներկայացնել ԵՊՀ մագիստրատուրայի 2017թ. ընդունելության առաջին փուլի պահանջներին բավարարող հավակնորդների նախնական ցուցակը:
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ներկայացնել ուսանողներին տրամադրվող լրացուցիչ խորհրդատվության ժամանակացույցը:
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ներկայացնել ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցները:
- Մինչև ս/թ փետրվարի 25-ը ներկայացնել պետական կրթաթոշակներ ստացող ուսանողների վերաբերյալ ֆակուլտետային մանդատային հանձնաժողովների արձանագրությունները՝ համապատասխան ցուցակներով:
- Մինչև ս/թ փետրվարի 25-ը ներկայացնել անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողների փաստաթղթերը:
- Մինչև ս/թ փետրվարի 25-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա 1-ին կիսամյակի քննաշրջանի արդյունքները /ձև 34/:

ՄԱՐՏ

- Մինչև ս/թ մարտի 1-ը ներկայացնել 3-ԳՄ /HK/ հաշվետվությունը:
- Մ/թ մարտի 1-ից 3-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով:
- Մինչև ս/թ մարտի 3-ը ներկայացնել ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով էջերի թիվը:
- Մինչև ս/թ մարտի 3-ը ներկայացնել դիպլոմների լրացման համար շրջանավարտների անձնագրային տվյալները:
- Մինչև ս/թ մարտի 13-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա 2-րդ կիսամյակում պետության կողմից ուսման վարձի մասնակի փոխհատուցման հավակնող ուսանողների վերաբերյալ փաստաթղթերը:
- Մինչև ս/թ մարտի 18-ը ներկայացնել ավարտական կուրսերի քննաշրջանի ժամանակացույցը:

ԱՊՐԻԼ

- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ներկայացնել տվյալներ՝ ավարտական կուրսերի հարցման թերթիկները նախապատրաստելու համար:
- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով էջերի թիվը:
- Ս/թ ապրիլի 4-ից մինչև ապրիլի 10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման մինչև 5-րդ կիսամյակը և առկա ուսուցման 5-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև ս/թ ապրիլի 6-ը ներկայացնել ամփոփիչ ատեստավորման ժամանակացույցը:
- Մինչև ս/թ ապրիլի 6-ը ներկայացնել ամառային պրակտիկայի անցկացման ծրագրերը, օրացուցային թեմատիկ պլանները և չվացուցակները: Պրակտիկայի ավարտից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, հաշվետվություն ներկայացնել՝ այն անցկացնելու մասին /մանկավարժական պրակտիկայի ավարտից հետո ներկայացնել մատյանները, օրագրերը/:
- Ս/թ ապրիլի 11-ից մինչև 17-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման մինչև 5-րդ կիսամյակը և առկա ուսուցման 5-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ ապրիլի 22-ը ներկայացնել 2017թ. բակալավրիատի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի վերաբերյալ հրամանների նախագծերը:
- Մինչև ս/թ ապրիլի 25-ը, ըստ մասնագիտությունների, ներկայացնել բակալավրի կրթական ծրագրով 2017-2021թթ. ուսումնական և 2017-2018 ուստարվա աշխատանքային պլանները, ինչպես նաև՝

ա/ ուսումնական պլաններում ընդգրկված նոր կրթական մոդուլների առարկայական ծրագրերը,

բ/ լաբորատոր, գործնական և սեմինար խմբերի թիվն ըստ կուրսերի,

գ/ 2017-2018 ուստարում կուրսային և ավարտական աշխատանքներ կատարող ուսանողների թիվն ըստ ամբիոնների:

- Մինչև ս/թ ապրիլի 25-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա կամընտրական առարկաների ընտրացանկն ըստ ուսանողների:
- Մինչև ս/թ ապրիլի 29-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները:

ՄԱՅԻՍ

- Մինչև ս/թ մայիսի 3-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Ս/թ մայիսի 2-4-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով:

- Մ/թ մայիսի 3-31-ը անցկացնել շրջանավարտների ամփոփիչ ատեստավորումը:
- Մինչև ս/թ մայիսի 15-ը ավարտել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:

Հիշեցում՝ շրջանավարտների ավարտական հրամանի նախագծի ներկայացումը կատարվում է վերջին քննության հաջորդ օրը:

Ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները ամփոփիչ ատեստավորումից հետո՝ հինգ օրվա ընթացքում, ներկայացնում են ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները:

- Մինչև ս/թ մայիսի 27-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված այն կրթական մոդուլների ցանկը, որոնց դասավանդման համար չկան համապատասխան մասնագետներ:
- Մինչև ս/թ մայիսի 30-ը ներկայացնել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները:
- Մինչև ս/թ մայիսի 30-ը կատարել 2017-2018 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների բաշխում:

ՀՈՒՆԻՍ

- Մինչև ս/թ հունիսի 1-ը ներկայացնել հաշվետվություն՝ 2017թ. շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ:
- Մ/թ հունիսի 1-10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման 5-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի համար դիմումները՝ ֆակուլտետի դեկանի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մ/թ հունիսի 10-20-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել առկա ուսուցման 5-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի ժամանակացույցերը և քննական հանձնաժողովների կազմերը:

ՀՈՒԼԻՍ

- Մինչև ս/թ հուլիսի 3-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները /առանց պարտքերի մարման/:
- Մինչև ս/թ հուլիսի 15-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա 1-ին կիսամյակի դասատախտակները:
- Մինչև ս/թ հուլիսի 15-ը ներկայացնել ուսանողների կուրսից կուրս փոխադրման հրամանները:

Ուշադրություն. «Անգլերեն լեզու և գրականություն» և «Ֆրանսերեն լեզու և գրականություն» մասնագիտությունների ավարտական կուրսերի ընթացիկ ստուգումներն ու քննություններն իրականացնել հետևյալ գրաֆիկով.

- 1-ին ընթացիկ ստուգումներն ու քննությունները անցկացնել ա/թ մարտի 6-11-ը, իսկ 2-րդ ընթացիկ ստուգումներն ու քննությունները՝ ա/թ մարտի 27-ից ապրիլի 8-ը:

II. Հեռակա ուսուցման 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացի կազմակերպման ժամանակացույց

- Բակալավրի կրթական ծրագրով հեռակա ուսուցմամբ ոչ ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ուսումնական պարապմունքներն իրականացնել ա/թ մարտի 1-29-ը, ավարտական կուրսերինը՝ մարտի 1-15-ը, իսկ «Անգլերեն լեզու և գրականություն» մասնագիտությանը՝ մարտի 1-ից մինչև մայիսի 24-ը:
- Հեռակա ուսուցման մինչև 7-րդ կիսամյակը 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումներն անցկացնել ա/թ փետրվարի 15-28-ը և ա/թ ապրիլի 25-ից մինչև մայիսի 1-ը ժամանակահատվածում:
- Հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնումներն անցկացնել ա/թ ապրիլի 25-ից մինչև մայիսի 01-ը ժամանակահատվածում և 2016-2017 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի լուծարքային շրջանում:
- Հեռակա ուսուցմամբ ավարտական կուրսերի համար ա/թ մայիսի 10-30-ը անցկացնել ուսումնական կոնսուլտացիաներ և ավարտական աշխատանքների նախապաշտպանություն:
- 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացիկ ստուգումներն ու քննություններն անցկացնել.

- ա/** ոչ ավարտական կուրսերի առաջին ընթացիկ ստուգումներն ու քննությունները՝ մարտի 30-ից մինչև ապրիլի 12-ը, իսկ ավարտական կուրսերինը՝ մարտի 16-26-ը:
- բ/** ոչ ավարտական կուրսերի երկրորդ ընթացիկ ստուգումներն ու քննությունները՝ մայիսի 18-31-ը, իսկ ավարտական կուրսերինը՝ մարտի 29-ից մինչև ապրիլի 5-ը:
- ոչ ավարտական կուրսերի երկրորդ կիսամյակի քննաշրջանն անցկացնել ա/թ հունիսի 1-ից մինչև սեպտեմբերի 23-ը, իսկ ավարտական կուրսերինը՝ ապրիլի 6-29-ը:
 - Մինչև ա/թ հուլիսի 1-ը ներկայացնել շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները:

Հեռակա ուսուցման բաժնի կողմից Ուսումնամեթոդական վարչություն փաստաթղթերի ներկայացման ժամանակացույց

ՀՈՒՆՎԱՐ

Ս/թ հունվարի 23-31-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժնի ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:

ՓԵՏՐՎԱՐ

- Մ/թ փետրվարի 1-7-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ փետրվարի 3-ը ներկայացնել 2017թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահների թեկնածությունները:
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ներկայացնել ուսանողներին տրամադրվող լրացուցիչ խորհրդատվության ժամանակացույցը:
- Մինչև ս/թ փետրվարի 22-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի դասատախտակները:

ՄԱՐՏ

- Մ/թ մարտի 1-3-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները՝ զեկուցագրերով:
- Մինչև ս/թ մարտի 15-ը ներկայացնել երկրորդ կիսամյակում ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի մասնակի փոխհատուցման ենթակա ուսանողների փաստաթղթերը:
- Մինչև ս/թ մարտի 21-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի 1-ին ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը, իսկ ավարտական կուրսերինը՝ մինչև ս/թ մարտի 15-ը:
- Մինչև ս/թ մարտի 23-ը ներկայացնել դիպլոմների լրացման համար շրջանավարտների անձնագրային տվյալները:
- Մինչև ս/թ մարտի 25-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:

ԱՊՐԻԼ

- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ներկայացնել տվյալներ՝ ավարտական կուրսերի հարցման թերթիկները նախապատրաստելու համար:
- Մինչև ս/թ ապրիլի 1-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա առաջին կիսամյակի ընթացիկ քննությունների համար անհրաժեշտ տետրերի քանակը՝ նշելով էջերի թիվը:
- Մինչև ս/թ ապրիլի 4-ը ներկայացնել ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մ/թ ապրիլի 4-10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման մինչև 7-րդ կիսամյակը և հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման դիմումները՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Մինչև ս/թ ապրիլի 6-ը ներկայացնել ամառային պրակտիկայի անցկացման ծրագրերը, օրացուցային թեմատիկ պլանները և չվացուցակները: Պրակտիկայի ավարտից հետո՝ երկու շաբաթվա ընթացքում, հաշվետվություն ներկայացնել՝ այն անցկացնելու մասին /մանկավարժական պրակտիկայի ավարտից հետո ներկայացնել մատյանները, օրագրերը/:

- Մ/թ ապրիլի 11-17-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման մինչև 7-րդ կիսամյակը և հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ա/թ ապրիլի 29-ը, ըստ մասնագիտությունների, ներկայացնել բակալավրի կրթական ծրագրով 2017-2022թթ. ուսումնական և 2017-2018 ուստարվա աշխատանքային պլանները, ինչպես նաև`

ա/ ուսումնական պլաններում ընդգրկված նոր կրթական մոդուլների առարկայական ծրագրերը,

բ/ լաբորատոր, գործնական և սեմինար խմբերի թիվն ըստ կուրսերի,

գ/ 2017-2018 ուստարում կուրսային և ավարտական աշխատանքներ կատարող ուսանողների թիվն ըստ ամբիոնների:

- Մինչև ա/թ ապրիլի 29-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա կամընտրական առարկաների ընտրացանկն ըստ ուսանողների:

ՄԱՅԻՍ

- Մ/թ մայիսի 2-ից 4-ը ներկայացնել մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման արդյունքները` զեկուցագրերով:
- Մինչև ա/թ մայիսի 12-ը ներկայացնել ամփոփիչ ատեստավորումների ժամանակացույցները:
- Մինչև ա/թ մայիսի 16-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի 2-րդ ընթացիկ ստուգումների և քննությունների ժամանակացույցը:
- Մինչև ա/թ մայիսի 23-ը ներկայացնել 2017թ. ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների կազմի վերաբերյալ հրամանների նախագծերը:
- Մինչև ա/թ մայիսի 27-ը ներկայացնել 2017-2018 ուստարվա աշխատանքային ուսումնական պլանով նախատեսված այն կրթական մոդուլների ցանկը, որոնց դասավանդման համար չկան համապատասխան մասնագետներ:
- Մինչև ա/թ մայիսի 27-ը ներկայացնել ոչ ավարտական կուրսերի 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի ժամանակացույցը:
- Մինչև ա/թ մայիսի 27-ը ներկայացնել շրջանավարտների ավարտական հրամանների նախագծերը:
- Մինչև ա/թ մայիսի 30-ը ներկայացնել ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածությունները:
- Մինչև ա/թ մայիսի 30-ը կատարել 2017-2018 ուստարվա կուրսային և ավարտական աշխատանքների թեմաների բաշխումը:
- Մինչև ա/թ մայիսի 30-ը ավարտել ավարտական աշխատանքների նախապաշտպանությունը:

ՀՈՒՆԻՍ

- Ս/թ հունիսի 1-ից մինչև հունիսի 10-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի համար դիմումները՝ բաժնի վարիչի մակագրությամբ և վճարման անդորրագրով:
- Ս/թ հունիսի 10-20-ը Ուսումնամեթոդական վարչության ՈւԳՊՎ բաժին ներկայացնել հեռակա ուսուցման 7-րդ կիսամյակում մինչև 12 կրեդիտ կուտակած ակադեմիական պարտքերի վերահանձնման երկրորդ փորձի ժամանակացույցները և քննական հանձնաժողովների կազմերը:
- Մինչև ս/թ հունիսի 28-ը ներկայացնել 2016-2017 ուստարվա երկրորդ կիսամյակի քննաշրջանի արդյունքները /ձև 34/:

ՀՈՒԼԻՍ

- Մինչև ս/թ հուլիսի 1-ը ներկայացնել շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները:

Հիշեցում՝ ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովների նախագահները ամփոփիչ ատեստավորումից հետո՝ հինգ օրվա ընթացքում, ներկայացնում են ամփոփիչ ատեստավորման վերաբերյալ հաշվետվությունները:

- Մինչև ս/թ հուլիսի 15-ը ներկայացնել ուսանողների կուրսից կուրս փոխադրման հրամանների նախագծերը:

ՏՆՕՐԵՆ՝

Ս.Ա.ԱՌԱՔԵԼՅԱՆ

